ունկնդիր լերուք։ Այլ և կանոնեալ հաւե զիրաւունս զոր պարտիք տալ յԱստուծոյ՝ բաժին Աթոռոյ, զհաս տանց քահանայից և զամ̄ ընտանեաց նոցա, զերախայրիս հնձանոց, զտեառնականս, զխաչուրհնէքն և զորբանուէրս զիրաւունս մատաղաց, կենդանեաց և ննջեցելոց, բազմականս և զանկարծամահս և զառակամահս, և զամենայն իրաւունս կենաց և մահու, լինել անխտիր տուք ՚ի ձեռս դորա զուարթ և առատ զի զտուրս զուարթ և առատ սիրէ Աստուած։ Իսկ մի՛ ոք իշխեսցէ հակառակիլ սմա և հրամանիս մեր, և արգելցէ իրաւունս տալոյ, կամ խորեսցէ, կամ (առ) ուսագ անկանի և յուշ հատուցանէ սուրբ նախավկային վանուց, զի որ ոք դմա, կամ հրամանիս մեր հակառակ լիցի, նա այնպիսին է ընդ անիծաւք ներքոյ բանադրանաց, զանէծսն Կայենի առցէ յԱստուծոյ. զմահն Յուդայի և զխաչահանուացն։ Որով աւրհնեալքն ՚ի դմանէ՝ աւրհնեալ եղիցին յԱստուծոյ կապեալքն ՚ի նմին մնասցեն մինչև զղջասցին։ Աստորոյ ՚ի մտանել դորա և հոգևորական բարձր հրամանիս մերոյ առ ձեզ և սուրբ Միածնին՝ իջցէ և շնորհք ողորմութեան Աստուծոյ յերկնից ՚ի վերայ ձեր եւթնպատիկ լցուսցէ զձեզ ամենայն հոգևոր և մարմնաւոր բարութեամբ. բարձցէ ՚ի ձէնջ զամենայն ցասումն և զպատուհաս և զտարաժամ մահ յաշխարհէ ձեր. տացէ և ձեզ շինութիւն, անդորրութիւն խաղաղութիւն, բուսոց և տնկոց և ամ̄ անդեոց ձեր յաջողութիւն և քաղցր պտղաբերութիւն պաճարեղէն անասնոց ձեր անխափան ծննդականութիւն և ամ̄ բարեաց ձեր լիութիւն և առատութիւն։ Իսկ աւրհնեսցէ զձեզ զամենեսեան Ք̄ս Ա̄ծ մեր, որպէս զի զառաւելեայ կեանս վայելիցէք և երկնից արքայութեան և Թագաւորութեան հասանիցէք ընդ ամ̄ սուրբս ՚ի Ք̄ս Յ̄ս ՚ի տէր մեր որ է աւրհնեալ յաւիտեանս ամէն։ Շնորհեցաք ՚ի ձեռն դորա ձեզ պարգևս հոգևորական ղեղն աւրհնութեան սրբալոյս և զաստուածագործ սուրբ տանն ՚ի լուսաւորութիւն նորածնելոցն աւազանաւ յորդեգրութիւն Հաւրն երկնաւորի և ՚ի ժառանգակցութիւն Քրիստոսի Աստուծոյ յուսոյն մերոյ. զնոյն ՚ի ճակատ նշան հաստատութեան, յաւծումն քահանայութեան ՚ի նորոգութիւն ս̄բ եկեղեցւոյ Քրիստոսի Աստուծոյ մերոյ աւրհնելոյն յամենայն յաւիտեանս ամէն.

— Խաչիկ ծառայ Յիսուսի Քրիստոսի շնորհաւք և ողորմութեամբ նորին Կաթուղիկոս ամենայն Հայոց.

— Գրեցաւ ձեռամբ Ագաթանգեղ դպրի Ն. Ի. Ն. Տումարի Արամեան Մնացուածի.

---

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

յՕրագրութեանց Սինոդի Ս. Էջմիածնի.

Ի 14. յունիսի. նշանակեցաւ ՚ի պաշտօն ծառայողի Սինոդի Ս. Էջմիածնի՝ արտաքոյ շտատի, և հաւատարմատար վանվէճելի Աթոռապատկան կալուածոց Տփխիսեցի Աստիճանաւոր Պ. Յովհաննէս Մկրտչեան Յովնաթանեանց.

— Ի նոյն թիւ նշանակեցաւ 'ի պաշտօն Թարգմանի Սինոդի և ուսուցիչ Ռուսաց լեզուի 'ի ճեմարանի Ս. Էջմիածնի՝ Աքքիրմանցի Պ. Սարգիս տէր Գէորգեան Սարութեանց.

— Ի նոյն թիւ նոյնպէս թոյլատրեցաւ Սինոդէն նորոգութիւն եկեղեցւոյն Խարասուբազար.քաղաքի վիճակին Հայոց Նոր Նախիջևանայ և Բեսարաբիոյ.

---

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

Սուրբ Աթոռոյս ուսումնական Յանձնաժողովը կարևոր դատելով Ռուսաստանի թեմերուն մէջ գտնուած ազգային ուսումնարանաց համար ստոյգ ծանօթութիւններ ստանալ, Վեհափառ Կաթուղիկոսի հրամանաւ առաջարկեց վիճակաւոր Առաջնորդաց, որպէս զի նոքա ըստ կարի փութով ջանան հասուցանելու առանձին առանձին ցուցակներով յետագայ տեղեկութիւնքը.

ա. Ո՛ւր և որքան են ուսումնարաններ և ծխական դպրոցներ, որ կ'ստորադրին իւրաքանչիւր թեմի հոգևոր իշխանութեան.

բ. Որքան է Տեսչաց, Հոգաբարձուաց, ուսուցչաց.թէ՛ թոշակաւոր և թէ՛ ձրիավարժ ուսանողաց թիւը և ի՛նչ ուսումն կ'աւանդուի վարժարանաց մէջ.

գ. Որպիսի նիւթական աղբիւրներէ կ'պահպանուի ուսումնարանաց գոյութիւնը. ուսումնական և տնտեսական վարչութեան մասին ո՛րքան դրամ յատկացած են. և տարին որքան մուտք և ծախք կարող են ունենալ.

դ. Իւրաքանչիւր ուսումնարան և դպրոց.քանի տարիէ հետէ բացուած է, և որպիսի բարոյական և ուսումնական դաստիարակութեան յառաջադիմութիւն կ'տեսնուի նոցա մէջ.և եթէ յատնի չի երևիր յաջող դրութիւն՝ որպիսի խափանարիթ պատճառներէ յառաջացած է.

Հետևաբար Յանձնաժողովը հարկ համարեցաւ առաջարկել ևս, որ ամեն Առաջնորդք և նոցա Փոխանորդք ամէն գիւղօրէից մէջ մասնաւոր դպրոցներ բանալու փոյթ ունենան, և քահանայքը ուսուցիչ և դաստիարակ կարգեն; Գիւղօրէից եկեղեցիքը եթէ ունին սեպհական դրամ, նոցա տոկոսիքէն մասնաւոր թոշակ յատկացնեն իւրեանց դպրոցներուն. և երբ որ չեն բաւեր նոքա՝ դրամոգլխէն միայն մի մասը ծախս անեն, գիւղական ազգային մանկունքը բոլորովին տգիտութեան մէջ չթողելու համար.

---

Մարդկային կենաց ընթացից մէջ յայտնի է որ, զօրավարաց գործունէէն զօրք կ.բաջալերին. և հոգևոր Հովուաց ջանասիրութենէն 'ի լուսաւորուի հօտի՝ ժողովուրդք նոր ոգի կառնուն 'ի դաստիարակութիւն և 'ի յառաջադիմութիւն